

## Ուսանողի ուսումնառության տարբեր ձևերի վերջնարդյունքների գնահատման սանդղակներ

*Նելլի Ադամյան*

DOI: <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-102>

***Հանգուցային բառեր.** կրթական վերջնարդյունքներ, լաբորատոր փորձ, մանկավարժական պրակտիկա, դաշտային պրակտիկա, գնահատման սանդղակ, գնահատման չափանիշներ, միավորային ցուցանիշներ*

**Նախաբան:** ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում համընդհանուր գնահատման համակարգ դեռևս չի կիրառվում: Ուստի սովորողների ուսումնառության վերջնարդյունքների գնահատման համար կարևոր է մասնագետների կողմից որակավորման ոլորտային շրջանակի պահանջներից բխող և մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխանող գնահատման սանդղակների ստեղծումը: Դրանք կարող են օժանդակել բուհում գնահատման միասնական վերաբերմունքի ձևավորմանը:

Ուսումնառության յուրաքանչյուր գործունեության տեսակ (դասախոսության և սկզբնաղբյուրների ուսումնասիրում, մշակում, սեմինարների, քննարկում/բանավեճերի մասնակցություն, սեփական կարծիքի հիմնավորում, որոշումների ընդունում և հարմարեցում իրավիճակի փոփոխություններին, լաբորատոր և գործնական աշխատանքների իրականացում, արտալսարանային մասնագիտական պրակտիկ գործունեության ծավալում և այլն) մեկ կամ մի քանի վերջնարդյունքների/կոմպետենցիաների ապահովման առավել շատ հնարավորություն ունի:

Համապատասխանաբար, գործունեության յուրաքանչյուր տեսակի արդյունքների գնահատման չափանիշները տարբեր են: Գնահատման սանդղակների հուսալիության և արդյունավետության կարևոր պայմանները, ճիշտ չափանիշների ընտրությունից գատ, այդ չափանիշների իրատեսական կշիռների և դրանցից յուրաքանչյուրի համար տարբեր միավորների հստակ պահանջների/ցուցանիշների որոշումն է՝ աստիճանական բարդացման, կառուցողականության սկզբունքով: Սանդղակներով գնահատումը ոչ միայն ապահովում է գնահատման օբյեկտիվությունն ու հուսալիությունը, այլև նպաստում է սովորողի ինքնագնահատման, փոխադարձ գնահատման, փոխվստահության, վերլուծական/համեմատա-

կան առաջընթացը պլանավորելու և այլ կարողությունների զարգացմանը:

Այս աշխատանքում կներկայացնենք ուսանողի կողմից իրականացրած լաբորատոր փորձի, դաշտային պրակտիկայի և մանկավարժական պրակտիկայի ընթացքում կազմակերպած դասի գնահատման սանդղակների նմուշներ:

**Հետազոտության բովանդակությունը:** Համաձայն Շիրակի պետական համալսարանի «Կենսաբանություն» մասնագիտական կրթական ծրագրի նպատակների ու վերջնարդյունքների՝ ի թիվս այլոց, սովորողի կարևոր վերջնարդյունքներից են նաև լաբորատոր փորձեր մշակելու և կատարելու, դասավանդման, հետազոտական արտալսարանային մասնագիտական գործունեություն ծավալելու կարողունակությունները, որոնք նախատեսված են «Կենսաբանություն» մասնագիտությունների ոլորտային որակավորման շրջանակի (ՈՈՇ) բնութագրերում [2]:

Յուրաքանչյուր կրթական ծրագրի նպատակը, համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովելուց բացի, սովորողի կրթական վերջնարդյունքների օբյեկտիվ գնահատումն է, որի համար ամենահուսալի գործիքը գնահատման սանդղակներն են: Դրանց ստեղծման սկզբունքներին անդրադարձել ենք մի շարք աշխատանքներում՝ առաջարկելով նաև ուսանողի ուսումնառության տարբեր գործունեությունների վերջնարդյունքների գնահատման սանդղակներ [1]: Գնահատման սանդղակը (սյունակաշար կամ ռուբրիկ) կապ է ստեղծում գնահատման չափանիշների և դրանցից յուրաքանչյուրի որակական ցուցանիշների միջև: Ընտրված յուրաքանչյուր չափանիշի աստիճանական բարդացող միավորային ցուցանիշների պահանջները պետք է լինեն իրատեսական, չափելի, կառուցողական, համեմատելի և համապատասխանեն կրթական ծրագրի վերջնարդյունքներին: Մեր կողմից ներկայացվող սանդղակները ստեղծվել և կիրառվում են ՇՊՀ-ի «Կենսաբանություն» կրթական ծրագրով ուսումնառող սովորողների կրթական վերջնարդյունքները գնահատելու համար: Համաձայն ուսանողների վերջնարդյունքների գնահատման ՇՊՀ-ի կանոնակարգի՝ 0-39 (D) միավորները համարվում են վերջնարդյունքների նվազագույն պահանջները չբավարարող և ուղենիշ են ձևավորող գնահատման, ուսանողի հետ հետադարձ կապի կազմակերպման համար, ուստի չեն դիտարկվում այս աշխատանքում: Իսկ 40-100 միավորները դրական են բավարար (C-, C, C+), լավ (B-, B, B+) և գերազանց (A-, A, A+) բաղադրիչների եռաստիճան ենթաբաղադրիչներով: Տառերին համապատասխանող միավորները ներկայացված են սանդղակներում [3]:

Առաջարկվող նմուշներում յուրաքանչյուր միավորային միջակայքի դեպքում ընտրված բոլոր չափանիշների համար ներկայացվում են պահանջներ՝ համապատասխան համարներով: Տվյալ միջակայքից ուսանողի հավաքած միավորը որոշվում և հիմնավորվում է՝ առաջնորդվելով սխալների ու թերությունների քանակով ու որակով: Ուսանողը տարբեր չափանիշներից կարող է հավաքել տարբեր միավորներ: Վերջնական միավորային գնահատականը կորոշվի բոլոր չափանիշներից ձեռք բերած համապատասխան միավորների և դրանց կշիռների արտադրյալների գումարով:

**Հետազոտության մեթոդները:** Ուսանողի գնահատվող գործունեության յուրաքանչյուր տեսակի համար անհրաժեշտ են գնահատման տարբեր սանդղակներ: Ցանկացած սանդղակ ստեղծելիս նախ ընտրվում են տվյալ գործունեությանը համապատասխանող գիտելիք, կարողություն/ հմտություն ստուգող չափանիշներ: Այնուհետև աստիճանական բարդացման սկզբունքով ձևակերպվում են յուրաքանչյուր չափանիշի համար տարբեր միավորներով գնահատելու համեմատական, չափելի, իրատեսական պահանջներ/ցուցանիշներ: Մեր կողմից ներկայացվող սանդղակների միավորային միջակայքերը համապատասխանում են ՇՊՀ-ում ընդունված գնահատման կարգին: Նույն տառային արտահայտությամբ միջակայքի միավորներով գնահատականը հիմնավորելու կողմնորոշիչը դասախոսի համար յուրաքանչյուր չափանիշին վերաբերող սխալների ու թերությունների քանակն ու որակն է:

Որպես այլընտրանք՝ նմուշ 1-ում միավորային պահանջները ներկայացված են առավելագույն միավորներից աստիճանաբար նվազեցման, իսկ 2-րդ և 3-րդ նմուշներում՝ նվազագույնից աստիճանաբար բարդացման սկզբունքով:

**Հետազոտության վերլուծությունն ու արդյունքները:** Այս աշխատանքում կներկայացնենք ուսանողի իրականացրած լաբորատոր փորձի, դաշտային պրակտիկայի և մանկավարժական պրակտիկայի ընթացքում կազմակերպած դասի գնահատման երեք սանդղակների նմուշներ, որոնք կիրառվում են ՇՊՀ-ի «Կենսաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի տարբեր դասընթացների նույնանման վերջնարդյունքները գնահատելու համար:

Յուրաքանչյուր սանդղակ ստեղծող ազատ է ստեղծագործ ցանկացած մոտեցում կիրառելու համար՝ ինչպես չափանիշների, դրանց քանակի և կշիռների ընտրության, այնպես էլ միավորային միջակայքի ցուցանիշների պահանջների ձևակերպման գործում:

**Նմուշ 1. Լաբորատոր փորձի գնահատման սանդղակ  
Գնահատման չափանիշներ և կշիռներ**

1. Փորձի իրականացման հաջորդական քայլերի տեսական իմացություն – 0,2:
2. Փորձի օբյեկտի, սարքավորումների ճանաչում և դրանցից օգտվելու կարողություն, անվտանգության պայմանների իմացություն, փորձի արդյունքների վրա ազդող բոլոր հնարավոր հանգամանքների հաշվառում – 0,4:
3. Դիտարկումների գրառում, արդյունքների վերլուծում, եզրահանգումների ձևակերպում – 0,4:

**Փորձի գնահատման միավորային սանդղակ  
(պահանջներ/ցուցանիշներ)**

**96-100 (A+) միավոր: Սովորողը՝**

1. Լիարժեքորեն տիրապետում է փորձի նպատակի, իրականացման, փորձի ընթացքի վրա ազդող բոլոր հանգամանքների իմացությանը:
2. Ճանաչում է օբյեկտը, սարքավորումներն ու նյութերը, տիրապետում է դրանց օգտագործման և անվտանգության կանոններին, կիրառման հմտություններին:
3. Փորձը կատարված է ամբողջական, տրամաբանական հաջորդականությամբ, ճշգրիտ հաշվարկներով: Վերլուծությունները գրագետ են, հետաքրքիր, ինքնուրույն, եզրակացություններն անթերի են՝ արդյունքների հիման վրա նոր վարկածների, լուծման ուղիների առաջադրումով:

**86-90, 91-95 (A-, A) միավոր: Սովորողը՝**

1. Տիրապետում է փորձի նպատակի, իրականացման ընթացքի գիտելիքներին, ոչ ամբողջական իմացություն ունի փորձի ընթացքի վրա ազդող բոլոր հանգամանքների վերաբերյալ:
2. Ինքնուրույն, լիարժեք իրականացնում է փորձը՝ ճիշտ օգտվելով օբյեկտից, սարքավորումներից և նյութերից:
3. Ոչ էական վրիպումներ են նկատվում արդյունքների գրանցման,

---

\* Հաշվի առնելով այն իրողությունը, որ ուսումնառության գործընթացում սովորողի նվազագույն պահանջների ձեռքբերումներն ավելի դանդաղ են զարգանում, դրա համար գնահատման միջակայքն ավելի մեծ է՝ 40-60 միավոր: Հետագա նվաճումներն ավելի հեշտ հաղթահարելի են, ինչի համար միավորների միջակայքերն աստիճանաբար փոքրանում են:

հաշվարկների մեջ, կարող է հիմնավորել որոշակի հանգամանքների ազդեցությունը արդյունքների վրա: Մասնակի, ոչ էական թերություններ կան եզրակացությունների և վերլուծությունների ձևակերպումներում:

**81-85 (B+) միավոր: Սովորողը՝**

1. Տիրապետում է փորձի ընթացքի մասին տեսական գիտելիքներին, դժվարանում է հիմնավորել փորձի ընթացքի և արդյունքների վրա ազդող գործոնները:
2. Որոշակի աջակցության կարիք ունի փորձը տրամաբանական հաջորդականությամբ կատարելու, օբյեկտը և սարքավորումներն ու նյութերը ճիշտ օգտագործելու համար:
3. Աջակցության կարիք ունի գրառումները, հաշվարկները ճիշտ և ամբողջական կատարելու համար: Վերլուծությունները ոչ ամբողջությամբ են հիմնավորված, եզրակացությունները ձևակերպված են թերություններով:

**71-75, 76-80 (B -, B) միավոր: Սովորողը՝**

1. Օգտվում է տեսական նյութից: Ինքնուրույն, ամբողջական չի կարող վերլուծել փորձի արդյունքների վրա ազդող գործոնները:
2. Սարքավորումները, նյութերը, օբյեկտը հիմնականում ճանաչում է, անփութություն, սակայն որոշակի ինքնուրույնություն է դրսևորում փորձի կատարման ընթացքում, ունի աջակցության կարիք:
3. Գրանցումները թերություններով են, որոշակի աջակցությամբ կարողանում է հաշվարկներ կատարել, լիարժեք վերլուծել չի կարող սխալ արդյունքները, կամ դրանց պատճառները:

**61-65, 66-70 (C, C+) միավոր: Սովորողը՝**

1. Տեսական նյութից օգտվելով՝ փորձում է ինքնուրույն աշխատանքը կատարել:
2. Օբյեկտը, սարքավորումներն ու նյութերը հիմնականում ճանաչում է, ուրիշների օգնությամբ է փորձն ավարտին հասցնում, մեծ չափով վերահսկողության կարիք ունի:
3. Գրանցումները լիարժեք չեն, հաշվարկները՝ թերություններով: Կատարած աշխատանքն ու արդյունքները վերարտադրում է՝ առանց վերլուծելու:

**40-60 (C-) միավոր: Սովորողը՝**

1. Փորձի նպատակն ու ընթացքը պատկերացնում է մեխանիկորեն, փորձի կատարման համար կարիք ունի տեսական նյութի ուղեցույցից օգտվելու:

2. Օբյեկտը, սարքավորումներն ու նյութերը բավարար չի ճանաչում, չի կարող ինքնուրույն դրանցից օգտվել, լրիվ վերահսկողության կարիք ունի:
3. Գրանցումները, հաշվարկները կատարում է ուրիշների օգնությամբ: Չունի վերլուծելու ունակություն:

**Վերջնական միավոր = 0,2. 1-ին չափանիշի միավոր + 0,4. 2-րդ չափանիշի միավոր + 0,4. 3-րդ չափանիշի միավոր**

Սկզբունքը կիրառելի է բոլոր նմուշների համար՝ արտահայտված համապատասխան չափանիշներով ու կշիռներով:

**Նմուշ 2. Դաշտային պրակտիկայի գնահատման սանդղակ պրակտիկայի գնահատման չափանիշներ**

Որպես ՇՊՀ-ում պրակտիկայի բազմագործոն գնահատման չափանիշների այլընտրանք, որոնք տարբեր են՝ կախված կրթական ծրագրից (բակալավր առկա/հեռակա, մագիստրատուրա) [4], առաջարկում ենք կենսաբանություն մասնագիտության ուսանողի ուսումնադաշտային պրակտիկայի կատարողականությունն ու ներկայացումը գնահատող սանդղակ՝ համապատասխան չափանիշներով:

1. Պրակտիկայի նպատակի մեկնաբանում, ուսումնական նյութի և դրանց հետ աշխատելու մեթոդների տեսական իմացություն – 0,3:
2. Լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդների կիրառական կարողություն – 0,5:
3. Օրագրի լրացում և հաշվետվության ներկայացում – 0,2:

**Օանթություն:** *2-րդ չափանիշը ներառում է մշտադիտարկման, նմուշների հավաքման/պահպանման, հերքարիումների, հավաքածուների ստեղծման, լաբորատոր և դաշտային փորձերի պլանավորման, իրականացման, արդյունքների գրանցման, վերլուծման կարողություններ, որոշիչներով աշխատելու, տարբեր չափանիշներով տարածքի և ուսումնասիրվող օբյեկտի հետազոտման (այդ թվում լուսանկարելու), փորձագիտական/համեմատական կարողություններ, հաշվետվության, եզրահանգումների ձևակերպման և այլ վերջնարդյունքներ՝ կախված դասընթացի առանձնահատկություններից:*

**Չափանիշների գնահատման պահանջներ/ցուցանիշներ**

**40-60 (C-) միավոր: Սովորողը՝**

1. Չի կարող հիմնավորել պրակտիկայի նպատակը, տեսական նյութին տիրապետում է մեխանիկորեն: Ընկալունակությունը ցածր է:

2. Մեխանիկորեն է տիրապետում լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդիկային, ուղեցույցներից օգտվելու, աջակցության և վերահսկողության կարիք ունի:
3. Օրագիրը լրացնելու և հաշվետվություն ձևակերպելու մեջ մեծ չափով աջակցության կարիք ունի: Հարցերի պատասխանները մեխանիկական վերատադրողական են:

**61-65, 66-70 (C, C+) միավոր: Սովորողը՝**

1. Մասնակի պատկերացումներ ունի պրակտիկայի նպատակների մասին, բավարար չափով ընկալում է տեսական նյութի իմաստը:
2. Ուղղորդումների շնորհիվ որոշակի չափով ընկալում է լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդիկան, կարողանում է կիրառել աջակցությամբ՝ օգտվելով ուղեցույցներից:
3. Որոշակի ուղղորդումներով լրացնում է օրագիրը, էական թերություններով, ոչ ամբողջական հիմնավորված հաշվետվություն է ներկայացնում, հարցերին տալիս է շատ սխալներով, շեղումներով մեխանիկական պատասխաններ:

**71-75, 76-80 (B-, B) միավոր: Սովորողը՝**

1. Բավարար ընկալունակություն ունի պրակտիկայի նպատակի ու տեսական նյութի վերաբերյալ, ճիշտ կիրառում է՝ մասնակի ուղղորդումներով:
2. Հասկանում է լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդիկայի էությունը, հիմնականում ինքնուրույն է կիրառում՝ օգտվելով ուղեցույցներից:
3. Որոշակի աջակցության կարիք ունի օրագիրը ճիշտ լրացնելու և հաշվետվության հիմնավորումները ձևակերպելու համար, հարցերին տալիս է ոչ լիարժեք պատասխաններ:

**81-85 (B+) միավոր: Սովորողը՝**

1. Կարող է հիմնավորել պրակտիկայի նպատակները, բավարար չափով, որոշակի թերություններով վերլուծում է տեսական նյութը և հիմնականում ճիշտ է կիրառում տեսական գիտելիքները:
2. Մասնակի աջակցությամբ մեկնաբանում է լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդիկան և հիմնականում ինքնուրույն է կիրառում անհատական աշխատանքներում:
3. Գրեթե ինքնուրույն, որոշակի թերություններով լրացնում է օրագիրը, հաշվետվությունը ներկայացնում բավարար հիմնավորումներով, և բավարար չափով պատասխանում է հարցերին:

**86-90, 91-95 (A-, A) միավոր: Սովորողը՝**

1. Կարողանում է ոչ էական/հազվադեպ էական սխալներով կիրա-

ռել տեսական գիտելիքները անհատական աշխատանքում, վերլուծել տարբեր գործոնների ազդեցությունը աշխատանքի թերությունների դեպքում:

2. Ամբողջությամբ տիրապետում է լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդիկային, հիմնականում ինքնուրույն կողմնորոշվում է անսպասելի իրավիճակներում:
3. Ինքնուրույն, գրեթե անթերի, ոչ էական սխալներով լրացնում է օրագիրը և ներկայացնում հիմնավորումներով հաշվետվություն և հարցերի պատասխաններ:

#### **96-100 (A+) միավոր: Սովորողը՝**

1. Անթերի/գրեթե անթերի տիրապետում է տեսական նյութին, ինքնուրույն և ստեղծագործաբար կիրառում է տարբեր իրավիճակներում:
2. Կարող է գնահատել տարբեր գործոնների ազդեցությունը հետազոտության ընթացքի և արդյունքների վրա, լաբորատոր և դաշտային հետազոտությունների մեթոդիկան ինքնուրույն հարմարեցնել իրավիճակներին, առաջարկել նոր լուծումներ:
3. Անթերի լրացնում է օրագիրը, հիմնավորումներով, վերլուծություններով, ինքնուրույն ստեղծագործ առաջարկություններով հաշվետվություն է ներկայացնում, հիմնավոր վերլուծություններով ամբողջական պատասխաններ է տալիս հարցերին:

### **Նմուշ 3. Մանկավարժական պրակտիկայի մեթոդիստի կողմից դասալսումների գնահատման սանդղակ**

ՇՊՀ-ում, ուսանողի մանկավարժական պրակտիկայի անցկացման և գնահատման կարգի համաձայն, ուսանողի պրակտիկայի վերջնարդյունքը գնահատվում է տարբեր բաղադրիչներով՝ համապատասխան կշիռներով: Դրանցից մեկը պրակտիկայի մեթոդիստի գնահատականն է՝ հաճախումների, ուսանողի կողմից կազմակերպած դասերի, միջոցառումների, դասալսումների, քննարկումներին մասնակցության արձանագրությունների հիման վրա [3]: Առաջարկում ենք պրակտիկայի ընթացքում ուսանողի կազմակերպած դասի գնահատման սանդղակ՝ սկսած ամենացածր դրական միավորից:

#### **Գնահատման չափանիշներ**

1. Դասի պլանավորում (*նպատակների ձևակերպում և համապատասխան մեթոդների ու առաջադրանքների ընտրություն, փուլերի հաջորդականության և ժամանակի ճիշտ բաշխման ապահովում, գնահատման սկզբունքներ*) – 0,5:



2. Դասի կազմակերպում (*գրագետ և քաղաքակիրթ հաղորդակցություն աշակերտների, դասալսողների հետ, դասի փուլերի հաջորդականության սահուն կազմակերպում, ներգրավվածության և ներառականության ապահովում, ժամանակի ճիշտ օգտագործում, օրյեկտիվ, հիմնավորված գնահատում*) – 0,5:

**Չափանիշների գնահատման միավորային  
պահանջներ/ցուցանիշներ**

**40-60 (C-) միավոր:**

1. Հիմնականում ակադեմիական գիտելիքների իմացության նպատակներ են ձևակերպված, մեթոդ(ներ)ը առաջարկված են անսկզբունք, դասի փուլերին ու նպատակներին համապատասխանությունը չպահպանած, առաջադրանքները միօրինակ են և սակավ, տարբեր կարիքներին չհարմարեցված՝ հիմնականում մեխանիկական հիշողություն, վերատաղրություն պահանջող, գնահատման չափանիշներ ձևակերպված չեն:
2. Մանկավարժական ունակությունները թույլ են, խոսքը գրագետ ու գրավիչ չէ: Աշխատանքը կազմակերպում է միայն հարցվող աշակերտի հետ, ներգրավվածություն չի ապահովվում, ուսուցման և ուսումնառության արդյունքների ստուգման ձևը մեխանիկական վերապատմումն է, հանձնարարականների առաջադրումն՝ առանց ջակցության և հետևողականության: Դասի փուլերի տրամաբանական հաջորդականությունը արտահայտված չէ, ժամանակը ոչ ճիշտ է օգտագործում, գնահատումը տարերային է՝ առանց հիմնավորումների:

**61-65, 66-70 (C, C+) միավոր:**

1. Ձևակերպված են ակադեմիական, սոցիալական (կամ՝ այլ) նպատակներ, որոշակի համապատասխանություն կա մեթոդների ու նպատակի միջև, առաջադրանքները հարցերի, նկարելու, կամ պարզ թեստային ձևով են՝ հիմնականում գիտելիք ստուգող, տարբեր կարիքներին չհարմարեցված, գնահատման չափանիշը հիմնականում գիտելիքի իմացությունն է:
2. Դասի կազմակերպում՝ մեխանիկական, որոշակի անվստահության, լարված պահվածքով, կցկտուր խոսքով, աշխատանք (հարցում, առաջադրանքի կատարում)՝ հիմնականում մեկ աշակերտի հետ, որոշ դեպքերում ճակատային հարցադրումներով, առանց ուղղորդումների, շտկումների, հաճախ մասնագիտական թերություններով: Դասի փուլերի անցումները սահուն չեն, ժամանակը ոչ միշտ է համապատասխանում դասի փուլին և առաջադրանքին,

մեթոդ(ներ)ը կիրառվում են տիպական, ոչ ստեղծագործ մոտեցմամբ, գնահատվում է հիմնականում գիտելիքը, որոշ դեպքերում ակտիվությունը՝ առանց հիմնավորումների:

**71-75, 76- 80 (B-, B) միավոր:**

1. Բացի ակադեմիականից՝ ներկայացված են նաև սոցիալական, կիրառական, որոշակի հմտություններ (նկարելու, սխեմավորելու, բացատրելու), զարգացնող նպատակներ, ոչ անթերի, նպատակին համապատասխան առաջադրանքներ՝ որոշակի ինքնուրույն մոտեցումներով և տարբեր կարիքներ հաշվի առնված, ոչ անթերի ձևակերպումներով՝ հիմնականում նպատակներին համապատասխան գնահատման չափանիշներով:
2. Անվստահության, ոչ ճիշտ կողմնորոշվելու դրսևորումներ անսպասելի իրավիճակներում, ոչ լիարժեք բացատրություններ, ուղղորդումներ հարցադրումներում, առաջադրանքների կատարման ընթացքում, հիմնավորումներ՝ գնահատման մեջ, վերարտադրողական մակարդակի ներկայացում և հարցում, ներգրավվածության մասնակի ապահովում:

**81-85 (B+) միավոր:**

1. Բացի ակադեմիականից՝ կարևորված են կիրառական և զարգացնող տարբեր նպատակներ, առաջարկված են համապատասխան մեթոդներ և ինքնուրույն բազմազան առաջադրանքներ, ձևակերպումներում կան անճշտություններ (նաև մասնագիտական), գնահատման չափանիշները հիմնականում համապատասխանեցված են նպատակին ու առաջադրանքի տիպին:
2. Դասը պատշաճ կազմակերպում է՝ մասնագիտական, մանկավարժամեթոդական որոշակի թերություններով, անսպասելի իրավիճակներում ոչ հմուտ ճկունության դրսևորումով: Անճշտություններ՝ բացատրությունների, հարցադրումների, առաջադրանքների հանձնարարականների, մեթոդների օգտագործման, ժամանակի բաշխման մեջ: Ոչ լիարժեք ուղղորդումներ՝ առաջադրանքների կատարման ընթացքում: Նախատեսված ոչ բոլոր չափանիշներով գնահատում, ոչ լիարժեք հիմնավորումներով:

**86-90, 91-95 (A-, A) միավոր:**

1. Կարևորված են տեսական գիտելիքի կիրառական և մտածողության տարբեր տեսակներ զարգացնող նպատակները: Առաջադրանքները բազմազան են, ստեղծագործ մոտեցումներով, տարբեր կարիքներ հաշվի առնված, ինքնուրույնություն, համագործակցություն և մտածողություն զարգացնող, մեթոդները հարմար

րեցված են նպատակին ու առաջադրանքին, գնահատման չափանիշները հստակ ձևակերպված են: Առկա են ոչ էական թերություններ:

2. Դասը կազմակերպում է վարժ, փուլերի սահուն անցումով՝ որոշակի ճկունություն դրսևորելով տարբեր իրավիճակներում, նպատակները, մեթոդները և առաջադրանքները, գնահատման սկզբունքները ներկայացնելով, առաջադրանքները մեկնաբանելով, ընթացքում ուղղորդելով, ներգրավվածություն ապահովելով, ժամանակը նպատակային բաշխելով: Անհատական և համագործակցային աշխատանքների կազմակերպման մեջ որոշակի, ոչ էական մասնագիտական և մանկավարժական թերություններով:

### **96-100 (A+) միավոր:**

1. Պլանավորված է հստակ նախագծով, փուլերի հաջորդականության և ժամանակի ճիշտ բաշխումով, հանձնարարականների հստակ ու գրագետ ձևակերպումներով, պատճառահետևանքային կապերի վերլուծություն, ներ- և միջառարկայական կապերի ինտեգրում պահանջող ինքնատիպ առաջադրանքներով: Առաջարկված են նպատակներին ու առաջադրանքներին համապատասխանող գնահատման չափանիշներ ու սանդղակ:
2. Դասը կազմակերպում է վստահ, ճիշտ մանկավարժական մոտեցումներով, իրավիճակում կողմնորոշվելով, նպատակները, մեթոդները և առաջադրանքները, գնահատման սկզբունքները հստակ մեկնաբանելով, ժամանակը ճիշտ օգտագործելով, տարբեր կարիքներով սովորողներին ուղղորդելով, համագործակցություն ապահովելով, արդյունքի հասնելու համար՝ առանց պատրաստի պատասխաններ ներկայացնելու, պատճառահետևանքային և ներ- ու միջառարկայական կապերի բացատրություններով, ինքնուրույն կարծիքի հիմնավորման պահանջով նյութի քննարկման կազմակերպումով, գնահատականների հիմնավորումով:

**Եզրակացություն:** Կրթական յուրաքանչյուր կառույցում միասնական սանդղակների ստեղծումը արդյունավետ ուսուցման և տարբեր կրթական ծրագրերով սովորողների նվաճումների գնահատման հավաստիության և հուսալիության կարևոր երաշխիք է:

Մասնագիտական ուսումնառության ընթացքում գնահատման սանդղակներ ստեղծելու հմտությունների զարգացումն ու սանդղակներով գնահատվելու փորձառությունը ուսանողներին հնարավորություն կտա գրագետ ու արդյունավետ ուսուցում և գնահատում կազմակերպելու

հետագա մասնագիտական և հարակից բնագավառներում գործունեություն ծավալելիս:

Մեր կողմից առաջարկված համապատասխան նմուշները որպես մոդել կիրառելի են նաև դպրոցում՝ աշակերտների լաբորատոր/գործնական և նախագծային/հետազոտական աշխատանքների գնահատման համար: Յուրաքանչյուր դասավանդող ազատ է ցանկացած ուսումնական գործունեության գնահատման չափանիշների ու ցուցանիշների ընտրության մեջ: Տարբեր մասնագետների կողմից նույն գործունեության համար մշակվող այլընտրանքային սանդղակները հիմք կհանդիսանան արդյունավետ միասնական սանդղակներ ստեղծելու համար:

**DOI:** <https://di.org/10.58726/27382923-ne2024.1-102>

### **Գրականություն**

1. Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Էդիթ Պրինտ», 2018, 264 էջ:
2. <https://escs.am/am/static/higher-education?s=edu> Կենսաբանություն. pdf «Կենսաբանություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրեր (ՈՈՇ) // ԿԳՄՄ նախարարի 2022թ. հունիսի-ի 17-ի թիվ 1151-Ա/2 հրաման: Հասանելի է 20. 09. 2023:
3. <https://shsu.am/wp-content/uploads/2023/11/3de0e3024667bc094ad596bcc8852f5b.pdf> Հասանելի է 03. 11. 2023:
4. <https://shsu.am/media/pdf/SUSh-praktikayi-kanonakarg-2021.pdf> ՇՊՀ-ի բակալավրիատի առկա, հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով իրականացվող պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ // ՇՊՀ-ի գիտ-խորհրդի 22.02.2021 նիստի №11/2 որոշում: Հասանելի է 20.06.2023:

## Шкалы оценки конечных результатов различных форм обучения учащихся

*Нелли Адамян*

### Резюме

**Ключевые слова:** *результаты обучения, лабораторный опыт, педагогическая практика, полевая практика, шкала оценки, критерии оценки, единичные показатели*

В системе профессионального образования РА до сих пор не используются универсальные шкалы оценивания достижений учащихся. Поэтому созданные каждым преподавателем шкалы оценивания, соответствующие итоговым требованиям образовательной программы, могут способствовать формированию единого отношения оценивания в вузе. Оценивание по шкалам является одним из показателей качества и объективности образования. Кроме того, способствует развитию у учащихся самооценивания, взаимного оценивания, аналитических/ сравнительных способностей, ответственности, планирования дальнейших действий по улучшению успеваемости и т. д. Каждый вид учебной деятельности (изучение и обработка лекций и первоисточников, участие в семинарах, дискуссиях/ дебатах, обоснование собственного мнения, принятие решений и адаптивное решение к изменениям ситуациям, выполнение практических лабораторных работ, осуществление внеклассной профессиональной деятельности (практика) и т. д.) имеют наибольший потенциал для достижения одной или нескольких из целей и результатов/компетенций образовательной программы.

Соответственно, критерии оценки результатов каждого вида деятельности различны. Важным условием надежности и эффективности шкал оценивания, помимо выбора правильных критериев, является определение реальных требований/показателей различных единиц по принципу постепенного усложнения конструктивности.

В данной работе мы представим образцы шкал, оценивающие результаты учащихся по проведению лабораторных экспериментов, полевой практики и уроков в ходе педагогической практики.

## Scales for Assessing the Final Results of Various Forms of Student Learning

*Nelli Adamyan*

### Summary

**Key words:** *learning results, laboratory experience, teaching practice, field practice, assessment scale, assessment criteria, single indicators*

The RA professional education system still does not use universal scales for assessing student achievements. Therefore, the assessment scales created by each teacher that, meet the final requirements of the academic program, can contribute to the formation of a unified assessment scale at the university. Scale assessment is one of the indicators of the quality and objectivity of education. In addition, it contributes to the development of students' self-assessment, peer assessment, analytical/comparative abilities, responsibility, planning of further actions to improve the student's academic performance, etc. Each type of educational activity (studying and processing lectures and primary sources, participation in seminars, discussions/debates, justifying one's own opinion, making decisions and adapting decisions to changing situations, performing practical laboratory work, carrying out extracurricular professional activities (practice), etc.) have the greatest potential to achieve one or more of the objectives and results/competencies of the academic program.

Accordingly, the criteria for assessing the results of each type of activity are different. An important condition for the reliability and effectiveness of assessment scales, in addition to choosing the right criteria, is to determine the real requirements/indicators of various units according to the principle of gradually increasing complexity of constructivity.

In this paper, we will present the samples of scales that evaluate the outcomes of students in laboratory experiments, field practice and lessons during teaching practice.

Ներկայացվել է 10.10.2023 թ.

Գրախոսվել է 23.10.2023 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.